

<p>“Ecolur” Informational NGO  Address: 24 Shinararneri str.  33 apt, 0038 Yerevan,  Armenia  E-mail:  <a href="mailto:ecolurpressclub@gmail.com">ecolurpressclub@gmail.com</a>  Web site: <a href="http://www.ecolur.org">www.ecolur.org</a>  Tel. (37491) 92 12 64 mob.</p>		<p>«ԷկոԼուր» տեղեկատվական  ՀԿ  Հասցե՝ 24 Շինարարների,  33 բն. 0038 Երևան,  Հայաստան  Էլ. հասցե՝  <a href="mailto:ecolurpressclub@gmail.com">ecolurpressclub@gmail.com</a>  Էլ. կայք՝ <a href="http://www.ecolur.org">www.ecolur.org</a>  Բջջ.՝ (+37491) 92 12 64</p>
---	--	--

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ  
պարոն Կարեն Սարգսյանին

### ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Սարգսյան,  
Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայն՝  
Գեղարքունիքի մարզում 7 արևային էլեկտրակայան էլեկտրաէներգիա է  
արտադրում: Դրանք են՝

1. «ՍՈԼ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ՝ «Արտանիշ-1» կայան
2. «ՋԻԷՅՉ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ՝ «Արտանիշ-2» կայան
3. «Ռադպիա» ինտերակտիվ համակարգ՝ ՍՊԸ՝ «Շորժա 1» կայան
4. «ՍՈԼԱՐ ՖԱՐՄ» ՍՊԸ՝ «Սուլար Ֆարմ» կայան
5. «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ՝ «Հերիթեյջ» կայան
6. «ՋԻԷՅՉ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ՝ «Արտանիշ-4» կայան
7. «ՍՈԼ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ՝ «Արտանիշ-3» կայան

Կառուցման փուլում է գտնվում 12 արևային էլեկտրակայան՝

1. «ԷֆԱրՎի Մասրիկ» ՓԲԸ՝ «Մասրիկ-1» կայան
2. «ԲԱՐԻ ԱՐԵՎ» ՍՊԸ՝ «Բարի Արև» կայան
3. «ՊՐՈՄ ՍԱՆ» ՍՊԸ՝ «Պրոմ Սինթեզ» կայան
4. «Ա-Ս ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ՝ «Ա-Ս» կայան
5. «ՍՈԼԱՐ-5» ՍՊԸ՝ «5Ս» կայան
6. «ՍՈՂՈՒԼ-ՍԱՆ»՝ «Մեծ Մասրիկ» կայան
7. «Դաս Էնտերիա Զուլարքրաֆթվերք» ՓԲԸ՝ «Էնտերիա-Շորժա 1» կայան
8. «ԱՐՏՍՈԼԱՐ» ՍՊԸ՝ «Արտսուլար» կայան
9. «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ՝ «Գրին Էներջի» կայան
10. «ԷՆԵՐԳԵՅԹ ԴԻԶԱՅՆ ԷՆԴՔՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ՝ «Ավազան 1» կայան
11. «ՄԱԳՆԱԿ ՍՈԼԱՐ» ՍՊԸ՝ «Արև-1» կայան
12. «ՄԱԳՆԱԿ ՍՈԼԱՐ» ՍՊԸ՝ «Արև-2» կայան:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տեղեկացնել.

- Այս կայանները ո՞ր բնակավայրերի տարածքներում են գտնվում:
- Յուրաքանչյուր կայանի համար քանի՞ հեկտար հողատարածք է հատկացվել և այդ հողերից քանի՞ հեկտարն է եղել գյուղատնտեսական նշանակության:
- Մարզում ամենամեծ հզորությամբ «Մասրիկ 1» արևային ֆոտովոլտային կայանի կառուցումը ե՞րբ է նախատեսվում սկսել և որքա՞ն այն կտևի:
- Արդյո՞ք ծրագրված է, թե ինչպես են կարգավորվելու շահագործումից դուրս եկած արևային վահանակների՝ որպես թափոնների օգտահանման, վերամշակման կամ պահման խնդիրները:
- Արդյո՞ք մարզում արևային էլեկտրակայան շահագործող կամ շահագործել պատրաստվող ընկերությունները որևէ օժանդակություն տրամադրում են ազդակիր բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար, եթե այո, ապա ի՞նչ օժանդակություն:

05.04.2022թ.

Հարգանքով՝

Ինգա Չարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,  
կենսաբանական գիտությունների թեկնածու

